

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 3-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Վեհափառ Հայրապետը մեկնեց Կիպրոսի՝ հանգստանալու «Կրասնի կամնի» առողջարանում:

Հայոց Հայրապետին ուղեկցում էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

* * *

Օգոստոսի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում քահանայական իր առաջին ս. պատարագն է մատուցում տ. Ավագ աբեղա Աստուրյանը և «Հայր մեր»-ից առաջ բարոզում՝ «Քեզ ասեմ, արի ա՛ռ զմահիճս քո՝ և երթ ի տուն քո» (Մարկ. Բ 11) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ Կիպրոսի հանրապետության նորոգ հանգուցյալ պրեզիդենտ Տ. Մակարիոս արքեպիսկոպոսի հիշատակին:

Այս տխուր առիթով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը օգոստոսի 5-ին հետևյալ ցավակցական հեռագիրը ուղարկեց Կիպրոսի Հունաց արքեպիսկոպոսարան.

Սրբազան տեղապահ
Քրիսոստոմոս Փաֆու.

Հայ եկեղեցու անունից, խորը վշտով Մեր ցավակցություններն ենք հայտնում Կիպրոսի հանրապետության նախագահ Մակարիոս արքեպիսկոպոսի վաղաժամ մահվան առթիվ:

Նրա հիշատակը պայծառ կմնա հայ եկեղեցու և հայ ժողովրդի հիշողության մեջ իբրև բացառիկ դեմքի և իր ժողովրդին նվիրված մեծ առաջնորդի: Աղոթում ենք առ Աստված՝ նրա արդար հոգու խաղաղության և լուսավորության համար:

Կիրակի, օգոստոսի 7-ին, ս. Էջմիածնի Մայր տաճարում հանդիսավոր հոգեհանգիստ կկատարվի տ. Մակարիոս արքեպիսկոպոսի հոգու հանգստյան համար:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

5 օգոստոսի 1977 թ.

*
* *

Օգոստոսի 14-ին, կիրակի.—Վերափոխումն ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, մեծ տոնի առիթով, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Խնկի ծառի նման ես, բարի պտուղ բերեալ ես, պտուղ ողու քաղցրահամ ես, Աստուածածին մեղայ քեզ» տաղի բնաբանով:

Այս առթիվ Մայր Աթոռ ուխտի էր եկել հավատացյալների հոծ բազմություն՝ ներկա լինելու օրվա հանդիսություններին, ստանալու համար հոգևոր մխիթարություն և բերկրանք:

Հավարտ ս. պատարագի, տ. Արսեն եպիսկոպոսի նախագահությամբ «կատարի օրհնութիւն խաղողոյ» կարգը:

*
* *

Օգոստոսի 15-ին, երկուշաբթի.—Ցիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Օգոստոսի 21-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Մեք սիրեսցուք զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ» (Ա Հովհ. Դ 19) բնաբանով:

*
* *

Օգոստոսի 27-ին, շաբաթ.—Այսօր Կիսլովոդսկից Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետը՝ «Կրասնի կամնի» առողջարանում շուրջ մեկ ամիս հանգստանալուց հետո:

Վեհափառ Հայրապետին ուղեկցել էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

*
* *

Օգոստոսի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում հավուր պատշաճի:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1977 թվականին էլ, Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ, կատարվեցին քահանայական մի քանի ձեռնադրություններ ներքին թեմերի եկեղեցիների համար:

Քահանայական թեկնածուները որոշ ժամանակով իրենց ուսումը կատարելագործեցին հոգևոր ճեմարանի մասնավոր դասընթացներում՝ ձեռք բերելով եկեղեցագիտական, ծիսապաշտական և շարականագիտական անհրաժեշտ գիտելիքներ:

Նախապատրաստական այս աշխատանքներից հետո թեկնածուներն իրենց մտավոր պատրաստության մասին քննիչ հանձնաժողովի առաջ քննություն հանձնեցին: Քննիչ հանձնաժողովի դրական վկայությունից հետո, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց արտոնել ընծայացուների ձեռնադրությունը:

Նորընծա քահանաներն են.

1.—Տեր Ներսես քհն. Տեր-Ներսիսյան. որը Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի ձեռամբ Երևանի ս. Սարգիս եկեղեցում քահանա ձեռնադրվեց՝ Կամո քաղաքի ս. Աստվածածին եկեղեցու համար:

2.—Տեր Դավիթ քհն. Զելվելյան, որը վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոսի ձեռամբ ս. Հռիփսիմե վանքի եկեղեցում քահանա ձեռնադրվեց՝ Թբիլիսիի հայոց ս. Էջմիածին եկեղեցու համար:

3.—Տեր Տիրատուր քհն. Կարվանյան, որը Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոսի ձեռամբ Լենինականի ս. Աստվածածին եկեղեցում քահանա ձեռնադրվեց՝ Կիրովական քաղաքի ս. Աստվածածին եկեղեցու համար:

Հիշյալ նորընծաներն իրենց քահանայական քառասունքը անցկացրին Մայր Աթոռում և ապա մեկնեցին իրենց պաշտոնատեղիները՝ նվիրվելու իրենց հոգևոր սպասավորության գործին;